իսկ առջեւի կողմում, որի դուռը բացւում էր փողոցի վրայ, զետեղուած էր սրճատունը: Դա մի ընդարձակ դահլիճ էր, լուսաւորուած իւղային ճրագներով: Եւրոպական կարասիք չկային այնտեղ: Դահլիճի բոլոր չորս կողմը, պատերի տակին, յատակից փոքր-ինչ բարձր, շինուած էին փայտեայ երկար բազմոցներ, որոնց վրայ ծալապատիկ նստած էին յաճախորդները: Նրանց մէջ կարելի էր գտնել ամէն տեսակ մարդիկ, սկսեալ քաղաքի դատարկամոլ սրիկաներից, մինչեւ վաճառականներ, արհեստաւորներ, կառավարութեան պաշտօնեաներ եւ ոչինչ պաշտօն ու պարապմունք չունեցող թափառականներ: Բոլորը նարգիլէ էին ծխում, ղահոէ էին խմում կամ զբաղուած էին մի որեւիցէ խաղով, որպիսին էր՝ նարդի եւ այլն: Թամբաքոի թանձր ծուխի միջից հազիւ կարելի էր լինում որոշել այդ խառնիճաղանջ բազմութեան դէմքերը: Ես մի կողմում միայնակ նստեցի եւ հեռուից նայում էի, թէ որպէս այդ մարդիկը, ճնշուած, խորտակուած օրական հոգսերի ծանրութեան ներքոյ, այժմ ծուխի եւ դառն ղահոէի թմրութեան մէջ, անձնատուր էին եղած մի տեսակ արբեցուցիչ ինքնամոռացութեան:

Թէոս ախպոր սրճատունը քաղաքի առաջնակարգ սրճատներից մէկն էր: Նրա պահողը, երկար տարիներ Կ. Պոլսում մնալով, մտցրել էր իր սրճատան մէջ մի քանի մայրաքաղաքեան կարգեր, բայց, այնուամենայնիւ, նրա սրճատունը պահպանել էր իր գաւառական բնաւորութիւնը: Այստեղ ամէն ինչ պատրաստւում էր, ամէն ինչ կատարւում էր այցելոի աչքի առջեւ: Նրա աչքի առջեւ եփում էին ղահոէն եւ շերեփի նման երկար սրճամանի պոչից բռնած, բերում էին եւ հէնց պահանջողի մօտ լցնում էին փոքրիկ ֆինջանի մէջ եւ մատուցանում էին նրան: Այդ երկար, պոչաւոր սրճամանները զանազան մեծութիւն ունէին: Նրանցից ամենափոքրիկը մի մատնոցի չափ հազիւ լինէր, իսկ նրա համեմատ ֆինջանը իր մեծութեամբ չէր տարբերւում սրճամանից, այնպէս որ, միանգամից եփածը նա կարող էր ամբողջութեամբ իր մէջ առնել եւ մի մարդու պահանջին բաւականութիւն տալ: Բայց այդ պահանջները կրկնւում էին ամէն րոպէում մի քանի անգամ: «Ղահոէ մըէ, — գոչում էր պահանջողը: «Շաքարո՞վ, թէ անշաքա՞ր», հարցնում էր պատրաստողը, եւ երբ հիւրի կամքը իմանում էր, իսկոյն մի քանի կաթիլ ջուր էր ածում մատնոցի՝ այսինքն սրճամանի մէջ, բռնում էր մանղալի վրայ, յետոյ սղկած ղահոէն ածում էր նրա մէջ, սեւ հեղուկը արդէն պատրաստ էր, մատուցանում էր պահանջողին, իսկ հաշիւը պահելու համար՝ ածուխով մի սեւ գիծ էր քաշում պատի վրայ: Այդ գծերից՝ ամէն մէկի անունով՝ կարելի էր համարել հարիւրներով, այն եւս մի քանի ժամուայ մէջ: Նարգիլէն ծխում էին եւ անդադար ձայն էին տալիս. «Ղահոէ մը»...